ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 385
*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման *աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքը (Սպիտակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ (Սպիտակ համայնքի (Սպիտակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

*ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքը (Սպիտակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 06-006-0339-0025 կադաստրային ծածկագրով 0.04211 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահող | 06-006-0339-0025 կադաստրային ծածկագրով 0.04211 հա մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված պահանջը (կցվում է):

4. ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Սպիտակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | |
|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | |
| | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | |
| | Լ.Առաքելյան |

Երևան, « 2 » «դեկտեմբերի» 2025 թ.